

Շք. ԼԴ. օր Մեծի պահոց: Տօմ արքայն  
Գրիգորի Լուսաւորչին մերոյ սուկայի  
չարչարանացն եւ մտանելոյն ի վիրապն:  
Իմստ 1.15--2.22: Մք 7.7-10, Փլպ 1.12-21:  
Մտ 16.24-28:

Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՅԵ

(Ա.ՉԳԱՊԱՏՈՒՄ Օրմանեանի, Ա. հասար:  
ԱՆԵՆՈՐԸԻ ԼՈՅՈՒՆ Ի ՀԱՅՍ Գարեգին Պա-  
արիարք Խաչատուրեանի, Ա. հասար)

Ա. — Կենսագրականը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Պարթեւաց ցե-  
ղէն Անակ անուն մարդու մը զուակն էր,  
ծնած 239 թուականին, Անակ Հայոց Կաս-  
րով թագաւորը սպաննած էր Պարսից Արտա-  
շէս թագաւորի գրգռմով: Կասրով իր հողին  
ուանդած պահուն հրամայեց սր Անակի սե-  
րունդը բնաջինջ ընեն: Եւ երբ բնաջինջ ը-  
րին, կասորածէն աղաթեցաւ Անակի մէկ  
տարեկան որդին, Գրիգորը: Միւս կողմէն  
Պարսից Արտաշէս թագաւորը Խոսրովին ցե-  
ղը սուրէ անցուց, որմէ ազտանցան Խոսրո-  
վին երկու զուակները, Տրդատ և իր քոյրը  
Խոսրովադուխտ:

Գրիգոր, որուն նախնին անունը Սուրէն  
էր, կապազովկիոյ կետարիա քաղաքը ղԵՐ-  
կուեցաւ, և հոն կրթուեցաւ քրիստոնէական  
կրօնքի սկզբունքներով: Ապա ամուսնացաւ  
Դուրիթ անուն մարդու մը զտեղի Մարիա-  
մին հետ և ունեցաւ երկու մանչ զուակներ,  
Արիստակէս և Վրդանէս: Գրիգոր երբ Հա-  
յաստան վերադարձաւ կը ծառայէր Տրդատ  
թագաւորի պալատին մէջ իր քարտուղար,  
որպէս զի գէթ մասամբ քաւ էր հորը  
յանցանքը իր այս ծառայութեամբը:

Տրդատ՝ որ իր քաջագործութիւններուն  
չնայել Հայոց թագաւոր պատկուած էր Հռով-  
մի Իսկղեախանոս կոյսեր օգնութեամբ, ի-  
րեն ձեռք բերած այս յաջողութիւններուն հա-  
մար Անանիոս աստուածունէիին զոհեր կը մա-  
տուցանէր Հայաստան վերադարձին, Նրիգա-  
յի մօտերը, Գայլ զեռին եզերքը. յայտնե-  
լու համար իր զոհունակութիւնը՝ հրամայեց  
Գրիգորին սր ինքն ալ մասնակցի այս արա-  
րողութեան: Գրիգոր սակայն մերմեց կառ-  
քին առջիւ խոնարհիլ և անոր յարգանք ըն-  
ծառիլ: Տրդատ անանելով Գրիգորի այս ա-  
րարքը բարկացաւ, և անոր զանազան չար-  
չարանքներ տալէ վերջը զինքը Արտաշատի  
խոր վիրապը նետեց, ուր մնաց մօտ 16 տարի:  
Կ'ըսուի թէ բարեպաշտ կին մը ամէն օր հոց  
կը նետէր այս խոր վիրապին մէջ, հաւանա-

կանաւոր Տրդատի քոյր Խոսրովադուխտի  
թերադրութեամբ, և կամ՝ Խոսրովադուխտ  
ինքն էր որ հոց կը նետէր. որովհետեւ  
ներքնապէս համակիր էր նա քրիստոնէա-  
թեան, բայց գաղանի կը պահէր իր այս  
համոզումը:

Երբ Գրիգոր բանտէն հլաւ, իրեն առա-  
ջին դարձեց եղաւ Հռիփսիմեանց կոյսերուն ոս-  
կորները ամփոփել տալով անոնց վրայ վիա-  
յարան մը կանգնել: Ապա Տրդատ թագաւո-  
րի և մեծամեծներուն որոշումով կեսարիա  
քաղաքը շրջուեցաւ և հոն Ղեւնդիոս Արք-  
եպիսկոպոսն նստ քահանայ և յետոյ ե-  
պիսկոպոս ու կաթողիկոս ձեռնադրուեցաւ:  
Հայաստան վերադառնալով՝ մեհեանները  
քանդեց և անոնց տեղ եկեղեցիներ շինել  
տուաւ, և քուրմերուն զուակները դաստիա-  
րակելով քահանայ ձեռնադրեց: Օր մը տե-  
սիլ մը ունեցաւ, և այդ տեսիլին Կիմամբ էջ-  
միածնայ մայր տաճարը կառոյց:

Հայաստանի ամէն կողմերէն դարձի ե-  
կան մեծ թուով Հայեր՝ սրանք մկրտուեցան  
Գրիգորի ձեռամբ Եփրատ գետին եզերքը:  
Տրդատ թագաւոր, Աշխէն թագուէին, Խոս-  
րովադուխտ արքայաքոյր և բոլոր պաշտա-  
կաններ ու նախարարներ եւս մկրտուեցան  
իրենց կարգին:

Գրիգոր կրօնական խիստ արդիւնուոր  
ու բարի յաջող գործունէութենէ մը վերջը  
վախճանեցաւ 326 թուականին, իր 87 տա-  
րեկան խօր ձեռութեան մէջ, և թողուեցաւ  
Թորդան անուն աւանը: Իրեն յիշատակը տա-  
րին երեք անգամ կը տօնուի Հայոց. Եկեղե-  
ցիին մէջ. խոր վիրապը մտնելուն, խոր վի-  
րապէն ելլելուն և իր նշխարներու գիւտին  
առիթներով:

Բ. — Մասուցած ծառայութիւնը:

1. Հայաստանի մէջ աւետարանչական  
մեծ գործ կատարեց, և աւետարանի լայ-  
սով լուսաւորեց Հայաստանի մօզավաւ-  
ղը: Հայ ազգին գոնդուածային քրիստո-  
նէութեան դարձը իր օրով տեղի ունեցաւ,  
և քրիստոնէութիւնը Հայաստանի պետական  
կրօնքը հռչակուեցաւ:

2. Ինք Հայաստանեայց եկեղեցիին ա-  
ռաջին կազմակերպիչը եղաւ, և եկեղեցւոյ  
նախնապետութեան սկիզբը դրու պաշտօնա-  
պէս: Իրմէ առաջ Հայաստանի մէջ քրիստո-  
նէութիւն կար թէեւ սակայն անկերպարան  
վիճակի մը մէջ էր. ինքն էր որ կազմակեր-  
պեց պայն և անոր նոր ու պաշտօնական սեղ-  
ուութիւն տուաւ:

3. Էջմիածնայ մայր տաճարի շինու-  
թիւնը ապահովեց երկինքէն իր ստացած  
տեսիլքին հետեւելով:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

(22.31-23.39)

MATTHEW 23

34 But when the Phār'i-sees heard that he had silenced the Sād'ōū-zees, they came together. 35 And one of them, a lawyer, asked him a question, to test him. 36 "Teacher, which is the great commandment in the law?" 37 And he said to him, "You shall love the Lord your God with all your heart, and with all your soul, and with all your mind. 38 This is the great and first commandment. 39 And a second is like it, You shall love your neighbor as yourself. 40 On these two commandments depend all the law and the prophets."

41 Now while the Phār'i-sees were gathered together, Jesus asked them a question, saying, "What do you think of the Christ? Whose son is he?" They said to him, "The son of David." 42 He said to them, "How is it then that David, inspired by the Spirit, calls him Lord, saying, 'The Lord said to my Lord, Sit at my right hand, till I put thy enemies under thy feet?' 43 If David thus calls him Lord, how is he his son?" 44 And no one was able to answer him a word, nor from that day did any one dare to ask him any more questions.

45 Then said Jesus to the crowds and to his disciples, "The scribes and the Phār'i-sees sit on Moses' seat; 46 so practice and observe whatever they tell you, but not what they do; for they preach, but do not practice. 47 They bind heavy burdens, hard to bear, and lay them on men's shoulders; but they themselves will not move them with their finger. 48 They do all their deeds to be seen by men; for they make their phylacteries\* broad and their fringes long, 49 and they love the place of honor at feasts and the best seats in the synagogues, 50 and salutations in the market places, and being called rabbi by men. 51 But you are not to be called rabbi, for you have one teacher, and you are all brethren. 52 And call no man your father on earth, for you have one Father, who is in heaven. 53 Neither be called masters, for you have one master, the Christ. 54 He who is greatest among you shall be your servant; 55 whoever exalts himself will be humbled, and whoever humbles himself will be exalted.

34 Երբ փարիսեցիները լսեցին թէ Յիսուս սաղաւի-  
35 ցիները սրտամեղաց, իրարու քով եկան: Անոնցմէ  
մէկը, օրէնագէտ մը, Յիսուսը փորձելու համար հար-  
36 ցուց. «Վարդապետ, Օրէնքին մէջ ո՞րն է մեծադոյն  
37 պատահանքը: Յիսուս ըստ անոր. «Միքէ՛ քա Տէր  
Աստուածդ ամբողջ սիրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամ-  
38 բողջ մտքովդ»: Ասիկա է մեծադոյն եւ առաջին պատ-  
39 ահիրանքը: Երկրորդը ասոր նման է, «Միքէ՛ ընկերդ էս  
40 ամձիդ պէս»: Այս երկու պատահանքերէն կախեալ է  
ամբողջ Օրէնքը եւ մարգարէութիւնները:

41 Երբ փարիսեցիները հասաքուեցան, Յիսուս հար-  
42 ցուց անոնց. «Մի՛չ կը խորձեք Քրիստոսի, խոստաց-  
ուած Փրկիչին մասին: Որո՞ւն սրկին է ան: Անոնք  
43 պատահանեցին. «Դուք թի՛ք: Յիսուս ըստ անոնց.  
«Բայց ինչպէ՞ս Դուք Ս. Հոգիով ներշնչուած՝ զայն  
Տէր կը կոչէ ս. կ'ըսէ.

44 "Տէրդ իմ Տիրոջս քառ.—  
աչ կողմս նստէ,  
մինչեւ քշմախիներդ ռաճերուդ սակ զմեմ  
որպէս պատուանդան":

45 «Արդ, եթէ Դուք զայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս  
46 անոր որդին կ'ըլլայ»: Ոչ ոք կրցաւ պատասխան տալ  
Յիսուսի. եւ այդ օրու ինչ սկսեալ յետէ մէկը շէր հա-  
մարձակեր իրեն հարցում ուղղել:

23.1 Ապա Յիսուս ժողովուրդին եւ իր աշակերտնե-  
րուն ըսաւ.

2 «Մտխոյն սթոսք նստան յորէնքի ուսուցիչներն  
3 ու փարիսեցիները: Իրենց լատմներուն հնազանդեցէք  
եւ կատարեցէք զանոնք, սակայն մի՛ ընէք ինչ որ ի-  
4 ընէք կ'ընեն. որովհետեւ անոնք կը սարկեցնեն, բայց  
զեն կատարեր: Անոնք ծոսը եւ դժուարակիր բռններ  
կը զնեն մարդոց ուներուն, մինչ իրենք նոյն բռնները  
5 կրեցու նուազադոյն ճիւղն իսկ չեն ընեն: Ինչ որ կ'ընեն՝  
մարդոց երեւելու համար կ'ընեն: Իրենց պրտապանակ-  
ները՝ կը լայնցնեն եւ իրենց հարուսաններուն ծոպերը  
6 կ'երկնցնեն: Ընթրիքներու ընթացքին պատուոյ տե-  
ղերը զբաւել կը սիրեն եւ ժողովուրդներու մէջ՝ ա-  
7 ռաջին աթուաները: Կը սիրեն հրոսպարակներու վրայ  
մարդոցմէ բարեւներ ընդունիլ եւ «Վարդապետ», այս-  
8 ինքն «Ուսուցիչ» կոչուիլ: Բայց դուք յետէ մէկը  
«Վարդապետ» մի կոչէք, որովհետեւ դուք բարոյ եղ-  
9 լայրներ էք եւ մէկ ուսուցիչ սննք: Երկրի վրայ յետէ  
մէկը «Հայր» մի կոչէք, որովհետեւ դուք մէկ Հայր  
10 ունիք, որ երկնքի մէջ է: «Առաջնորդ» մի կոչուիք,  
11 որովհետեւ ձեր միակ տառաջնորդը Քրիստոս է: Ձեր  
12 մէջէն մեծը թող ձեր սպասուսըրը ըլլայ: Այլ որ իր  
անձը կը բարձրացնէ՝ սխալ խոնարհի, եւ ոյլ որ իր  
անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:



Մտադուկեցիք ուղած էին Յիսուսը շփոթեցնել իրենց զարոցական նըր-  
բութիւններով, եւ անոր խնայտուն եւ օրհնուէտ եւ մեծ վարդապետի համ-  
բար կտարել, անյուծանելի խնդիրներ առաջարկել կործելով: Բայց ար-  
գիւնքը բոլորովին հակառակն էր եղած, զի ոչ թէ կրցած էին Յիսուսը պա-  
պանձեցնել, այլ իրենց պապանձումի մասնուած մտային: Փարիսեցիներ,   
սրչափ եւ սերախ սր Յիսուս մեռւորներու յարութեան վրայ իրենց կործիքը  
պաշտպանեց, սակայն չէին ասնիր որ Յիսուս իրենց բարեկամներն ու հա-  
կատակութեան օգնականները անօթապարտ թողու. ուստի որոշեցին առաջ  
անցնել եւ շոր խնդիրով մը Յիսուսը շփոթեցնել, իրենց առաջարկած հար-  
ցումը եղաւ. 11<sup>ր</sup> պատուիրան մեծ է յօրէնս: Այդ հարցումը Գալիլէոյ մէջ ալ  
Օրինական մը ուղղած էր Յիսուսի (Ղուկ. Ժ. 25), յայց նա ուրիշ կողմէ  
քաղած էր առաջարկը, այսինքն թէ ի՞նչ ընէ որ երկնից Արքայութեան ար-  
ժանանայ (Յ 148): Թէ՛ հարցումին տեղը, թէ՛ ասեմը եւ թէ՛ աւելի բարդ-  
ովին տարրեր լինելուն, յայտնի բռնապատութիւն պիտի համարուի անոնց կար-  
ծիքը, որ Ղուկասին նախընթացաբար՝ պատմածը, Մատթէոսի եւ Մարկոսի  
այտեղ պատմածին հետ նոյնացներու ճիշդեր կ'ընեն: Մանաւանդ որ Ղուկասի  
մէջ նոյնինքն Օրինականն է որ գլխաւոր պատուիրանները կը յիշէ, իսկ այս-  
տեղ ինքն Յիսուսն է, որ մեծ պատուիրանը կը բացատրէ:

«Մեծ պատուիրանը, կ'ըսէ Յիսուս, սէրն է, որ երկու մասեր ունի:   
Առաջինը Աստուծոյ սէրը, իսկ երկրորդը ընկերին սէրը, եւ այս պատուի-  
րանները Մովսէսին կողմանէ ալ հռչակուած են կանուխէն, եւ անոր օրհնը-  
ներուն մէջ դրուած են թէ, Սիրեցես զՏէր Աստուած եւ յամենայն սրտե  
էութիւն եւ յամենայն տեսնէ բաւմէ եւ յամենայն մտոց քոց (Բ. Օր. 9. 5).  
Եւ թէ Սիրեցես զընկերի էս իբրեւ զամեն էս (Ղեւտ. ԺԹ. 18): Մովսէսի օ-  
րհնքներուն եւ մարդարէներու պատուամներուն մէջ ինչչափ հրամաններ ու  
պատուիրաններ կան, ամէնքն ալ այդ երկու խօսքերուն մէջ կը պարունա-  
հուին. այնպէս որ ով որ այս երկու պատուիրանները լիովին կը կատարէ,  
նա կատարեալ մարդ է: Դուք ալ պէտք է այդ պատուիրաններուն վրայ մտա-  
դրութիւն դարձնէք, եւ ի դուր արտաքին մեակերդութեանց վրայ չբնէք կա-  
տարելութեան եւ արդարութեան կարեւորութիւնը»:

Յիսուսը փորձելու համար խմբուած փարիսեցիներու մէջ կը գտնուէր  
զպիլը մը, աւելի բարեմիտ տրամադրութիւններով դրած եալ, ինչպէս զիտել  
կու տայ Մարկոս, որ համակրութեամբ կը շնչէր Յիսուսի տուած խնայտուն  
պատասխանները, եւ Մտադուկեցիներն ու Փարիսեցիները նոյնիսկ Ս. Գիրքին  
խօսքերով պապանձեցնելը: Ով էր չենք զիտել, բայց զիտենք թէ նոյնիսկ  
սենեարիտնի մէջ չէին պակսեր Նիկողիմոսի նման Յիսուսի վարդապետու-  
թեան վրայ դարձացողներ: Այդ զպիլն է, որ Յիսուսի վերջին պատասխանին  
վրայ լի կրնար լուս մնալ, եւ առջեւ անցնելով համարձակ կը խոստովանի.  
«Երաւունք ունիս, վարդապետ, մեծ ճշմարտութիւն մը խօսեցար, ուղղու-  
թեան ճիշդ հիմը ցոյցուցիր. Աստուած է ամենայն ինչ, անկէ դուրս սրեւ  
բան նշանակութիւն ու կարեւորութիւն չունի, եւ կատարելութիւնն ալ այն  
դործն է որ ուղղակի Աստուծոյ կը գլխէ, եւ այս է Աստուծոյ սէրը: Անկէ  
դուրս շատ մը արտաքին դարձեր, որ ուղղակի Աստուծոյ չեն գլխեր, մարդը  
կատարեալ չեն ըներ: Պէտք է, այս՛, զԱստուած սիրել, եւ բոլոր սիրտի եւ  
միտքի զօրութիւնները Աստուծոյ սիրոյն համար դորձածել: Աստուծոյ սի-  
րոյն ամբողջացումն է ընկերին սէրը, երբոր մարդ ընկերը կը սիրէ Ա-  
ստուծոյ համար, առանց սրեւէ երկրորդական նպատակի, եւ առանց այս սի-  
րոյն չափ մը սահմանելու, այլ կը սիրէ իր ընկերը կատարելապէս, ինչպէս  
ինքնինքը կը սիրէ: Երաւունք ունիս, վարդապետ, համարձակ հռչակելու  
թէ այդ սէրն է բոլոր պատուիրաններուն լուսը, եւ թէ սիրոյն հետ բող-  
դատուելով շատ ետեւ կը մնան զոհեր ու ողջակէղներ, մաքրութիւններ եւ  
խորութիւններ»:

Այս բարեմիտ զպիլին համարձակ յայտարարութիւնը Յիսուսին ալ  
մեծ դժուարում պատճառեց, եւ անոր դառնալով ըսաւ. «Այդ սկզբունքներով  
գուն ալ իմ քարոզած երկնից Արքայութեան վարդապետութիւնը ընդունած  
կ'ըլլատ. Աստուծոյ Արքայութեան մօտեցեր ես, նայէ՛ որ անոր մէջ մտնելէ  
ետ չբարեւիս»: Այսպէս փակուեցաւ մեծ պատուիրանին խնդիրը:

Բնթանկիացի Ղազարոսը  
(Յովհ. ԺԱ. 17-44) որ չորս օր առաջ մեռած  
ու թաղուած էր՝ երբ Յիսուս այցելեց անոր  
գերեզմանը:

ՀՐԱՆՔԸ ԵՒ ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԷՆԻՔԸ

Ա. — Հրաճի սահմանը:

Հրաչք կը կոչուին այն դէպքերն ու երեւոյթները որոնք մեր գիտցած բնական օրէնքներով չեն բացատրուիր:

Չոր օրինակ, Ղազարոս մեռած ու թաղուած էր, չորս օր ետքը Յիսուս գոյն դերիմանէն դուրս կանչեց և վերակենդանացուց: Աւելիա հրաչք կը կոչուի, քանզի մեր գիտցած բնական օրէնքներով չենք կրնար բացատրել գոյն:

Բ. — Հրաճիմ առջուրթիւնը բնական օրէնքներու հետ:

Հրաչքը բնութեան օրէնքներէն վեր մեր չգիտցած օրէնքներով կը կատարուի: Բնութեան օրէնքները ուրիշ բան չեն բաց եթէ Աստուծոյ սահմանափակումները: Ուրիշ խօսքով, Աստուծոյ կեանքին սկզբունքները, որոնք յաւիտեական են և կը կառավարեն մեր տիեզերքը:

Աստուած կը յարգէ իր սկզբունքները և չի հակասեր իր գրած օրէնքներուն: Աստուած բնութեան մէջ գործած է անցեալի մէջ և այսօր եւս կը գործէ, բայց ոչ թէ իր քրտնահոսքին համեմատ, կամ կամայապաշտօրէն, այլ իր սկզբունքներուն և որոշ օրէնքներուն միջոցաւ:

Գ. — Հրաճիմ բացատրուիւնը:

Հրաչքը Աստուած կը կատարէ այն օրէնքներով որոնք վեր են մեր մտքի հասողութիւնէն:

Բնութիւնը, որուն մէջ կ'ապրինք, շեջուն է գաղտնիքներով և օրէնքներով, որոնց մասին մենք շատ քիչ բան գիտենք: Ովկիանոսի մէջ ջուրի մեծ զանդուածին քով մէկ կաթիլ ջուրը ինչ որ է մեր գիտցած օրէնքները մեր չգիտցած բնութեան օրէնքներուն հետ գրեթէ նոյն համեմատութիւնը ունին:

Առկէ երեք հազար տարի առաջ մեռած մէկը, եթէ կարենար այսօր յարութիւն առնել և երկրագունդու այցելել, հրաչք պիտի կոչէր օդանաւին մէջ մարդոց թռչուններու նման թռչիլը: Երբեք երեք հազար տարի առաջուան իր գիտցած օրէնքներով չէր կրնար բացատրել օդանաւին շարժիլը օդին մէջ:

Դ. — Հրաճի եւ Բրիտանիական հաւատքը:

Բրիտանիական հաւատքը հիմնուած է Յիսուսի ապրած կեանքին և անոր մեզի հաղորդած բարձրագոյն սկզբունքներուն վրայ: Բրիտանիական կրօնին առանցքը Յիսուս ինքն է: Ս. Գրոց հրաչքները Բրիտանիական հաւատքի հետ անուղղակի միայն կապ ունին: Մենք Յիսուսը կը սիրինք ու կը պաշտենք, ո՛չ թէ հրաչքներ գործած ըլլալուն պատճառաւ, այլ մեզի գաղտնիարական բարձր կեանքի մը օրինակը տուած ըլլալուն համար: Եթէ Յիսուս մէկ հառ իսկ հրաչք գործած չըլլար իր արժանիքէն որ եւ է բան կրկին չէր կորսնցներ իր առաջնորդը Բրիտանիական հաւատքի:

Բրիտանիական կրօնին հետանկարը, սուտի, ո՛չ թէ հրաչքն է այլ հրաչաղորդը, ոչ թէ պարզելն է՝ այլ պարշուտուն: Մեծագոյն հրաչքը Բրիտանիական կրօնի մէջ Յիսուսի աշխարհ քերած բարձրագոյն կեանքն է: Կեանք մըն է այն, որուն հետեւիլը մեզ կը վերացնէ եւ Աստուծոյ կը մտնուի:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԵՏԱՐԱՆԷՆ

MATTHEW

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

(20.29-21.17)

29 Երբ Յիսուս եւ իր աշակերտները Երեզովէն դուրս կ'ելլէին, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ իրեն: 30 Ճամբու եզերքին նստած երկու կոյրեր, երբ լսեցին որ Յիսուս կ'անցնի, սկսան աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, 31 Յիսուս, Դաւիթի որդի»: Ժողովուրդը սաստեց անոնց որպէսզի լռեն, բայց անոնք աւելի բարձր ձայնով շարունակեցին աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի որդի»: Յիսուս կանգ առաւ, իր մօտ կանչեց կոյրերը 32 եւ հարցուց. «Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ձեզի»: Անոնք պատասխանեցին. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»: Յիսուս զթաց եւ անոնց աչքերուն դպաւ: Կոյրերը անմիջապէս սկսան տեսնել եւ հետեւեցան իրեն:

21.1 Երբ Երուսաղէմի ժողովան եւ նստան Բեթփաղէ, 2 Զիթննեաց լեւան կողին, Յիսուս իր աշակերտներէն երկուքը զրկեց՝ անոնց սրատուրելով. «Իացէք որ դիմացի վիպը եւ անմիջապէս հոն կապուած էջ մը պիտի դնէք իր աւանակին նստ. քակեցէք եւ ինծի 3 լեռէք: Եթէ մէկը առարկէ, լսէք. «Տէրը անոնց պէտք ունի», եւ անմիջապէս թոյլ պիտի տայ ձեզի»: Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականանայ Մարգարէին խօսքը.

3 «Երուսաղէմի լսէք. Անա քու քաղաքդ բեզի կու գայ. Ասիկա հեզ է, հատած իշու մը աւանակին վրայ»:

6 Աշակերտները դային եւ կատարեցին ինչ որ Յիսուս որոտուրեց իրենց: Բերին էջ ու աւանակը եւ իրենց հազուստները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց հաղուստները կը փռէին ճամբուն վրայ, ուրիշներ ծառերէն թատեր կը կորէին եւ կը տարածէին ճամբուն վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափարին մէջ Յիսուսի առջեւէն կ'երթար կամ կը նետուէր իրեն, կ'աղաղակէր.

«Օրինու թի՛ւմ Դաւիթի որդիին, օրինալ է ան որ կու գայ Տիրոջ սնունով: Օրինու թի՛ւմ Բարձրեային»:

10 Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դողալեցաւ: 11 «Ո՞վ է տսիկա», կը հարցնէին քաղաքի բնակիչները. եւ ամբողջ կը որոտոտանէին. «Ասիկա Յիսուս մարգարէն է, Դաւիթի Նաղարէթ քաղաքէն»:

12 Ապա Յիսուս տաճար մտաւ եւ դուրս վճնոց շարտ անոնց որոնք տաճարին մէջ առածախ կ'ընէին. լուսալուստներուն սեղանները եւ սղանկեղաններուն աթոռները շրջեց եւ բառ անոնց. «Մուրը Դիբբերուն մէջ զբոսած է. «Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի», մինչ դուք դայն առողակներու որջի վերածած էք»:

14 Տաճարին մէջ Յիսուսի ժողովան կոյրեր եւ կողեր եւ ան բժշկեց ցանոնք: Երբ քահանայապետներն ու ղարկները տեսան Յիսուսի կատարած զորչքները եւ լեռքին աղաղակը մտնուկներուն, որոնք տաճարին մէջ կը դռէին. «Օրինու թի՛ւմ Դաւիթի որդիին», բարկացան եւ Յիսուսի բռն. «Կր լսե՛ս ինչ կ'ըսեն ատոնք»: Յիսուս որոտախոսեց. «Այո՛, չէ՞ք կարդացած Մուրը Դիբբին սու խօսքը, թէ «Մանուկներու եւ կաթնի կրկններու թերևով գովեստ հիւսեցիր»:

17 Ապա Յիսուս ձգեց դանսը եւ քաղաքէն դուրս ելաւ՝ ղէպի Բեթանիա, եւ հոն զիջեցեց:

29 And as they went out of Jericho, a great crowd followed him. 30 And behold, two blind men sitting by the roadside, when they heard that Jesus was passing by, cried out, "Have mercy on us, Son of David!" 31 The crowd rebuked them, telling them to be silent; but they cried out the more; "Lord, have mercy on us, Son of David!" 32 And Jesus stopped and called them, saying, "What do you want me to do for you?" 33 They said to him, "Lord, let our eyes be opened." 34 And Jesus in pity touched their eyes, and immediately they received their sight and followed him.

21 And when they drew near to Jerusalem and came to Bethphage, to the Mount of Olives, then Jesus sent two disciples, 2 saying to them, "Go into the village opposite you, and immediately you will find an ass tied, and a colt with her; untie them and bring them to me. 3 If any one says anything to you, you shall say, 'The Lord has need of them,' and he will send them immediately." 4 This Entry into Jerusalem

took place to fulfil what was spoken by the prophet, saying, 5 "Tell the daughter of Zion,

Behold, your king is coming to you, humble, and mounted on an ass, and on a colt, the foal of an ass."

6 The disciples went and did as Jesus had directed them; 7 they brought the ass and the colt, and put their garments on them, and he sat thereon. 8 Most of the crowd spread their garments on the road, and others cut branches from the trees and spread them on the road. 9 And the crowds that went before him and that followed him shouted, "Hosanna to the Son of David! Blessed is he who comes in the name of the Lord! Hosanna in the highest!" 10 And when he entered Jerusalem, all the city was stirred, saying, "Who is this?" 11 And the crowds said, "This is the prophet Jesus from Nazareth of Galilee."

12 And Jesus entered the temple of God and drove out all who sold and bought in the temple, and he overturned the tables of the money-changers and the seats of those who sold pigeons. 13 He said to them, "It is written, 'My house shall be called a house of prayer'; but you make it a den of robbers."

14 And the blind and the lame came to him in the temple, and he healed them. 15 But when the chief priests and the scribes saw the wonderful things that he did, and the children crying out in the temple, "Hosanna to the Son of David!" they were indignant; 16 and they said to him, "Do you hear what these are saying?" And Jesus said to them, "Yes; have you never read, 'Out of the mouth of babes and sucklings

thou hast brought perfect praise?'" 17 And leaving them, he went out of the city to Bethany and lodged there.

Երբոր Յիսուս էջին վրայ հեծած Ժողովուրդին մէջ երեւցաւ, կործես թէ հանդիսական ցոյցը նոր փայլ մը առաւ, եւ Ժողովուրդական խանդավառութիւնը իւր դադաթնակէտին հասաւ: Էջին վրայ հեծնելը անարգ բան մը չէր, ինչպէս որ մենք ուսոյր կը կործենք, մեր Ժամանակի դադաթնակէտով: Հին ատեններ էջը սովորական հեծնելու կենդանի մըն էր, թէպէտ երկիրներու աւելի մար, բայց ոչ ըստ ինքեան ստորին, զի մին հարաւային երկիրներու մէջ թաղաւորաց եւ իշխանաց սեփական լուսաւթիւն մըն էր: Այսօր ալ Եգիպտոսի եւ Պարսկաստանի մէջ էջ հեծնելը սրտաուշաւոր հանգամանք ունի: Յիսուս ալ սովորական եղած սրտաուշաւոր մէջ մը դործածած եղաւ, թէպէտ բարձրագոյն շարժումներէ համեմատութեամբ խուսափելով: Ժողովուրդն ալ նոյն դրացմամբ սրտաուշաւոր եւ փառաց նշաններ սկսաւ առատացնել այդ պարագային: Առաջին նշանն էր ամենան ձեռքը կանանց ստան բռնել, զորս Զրթնեանց լիբան ծառերէն կը կորչէին, եւ միթեմի ռսան էր աւելի մէջանց երեւոյցը, թէպէտ արմաւենիի ստանը ալ կային, ինչպէս Յովհաննէս կը յիշէ, թէպէտ այժմ արմաւենիին առաւ չէ այդ կողմերը, սակայն հին ատեններ բաւական կար, ինչպէս եղբի Ժամանակն ալ Տաղաւորահարաց տօնին դործածուած լինելը կը յիշուի (ՆՆՆՎ. Ը. 15), եւ մանաւանդ Բեթանիայի շուրջը, սրտն անունն ալ լաւագոյն ստուգարանութեամբ Տուն արմաւի կը թարգմանուի: Չեռուրինն ստանը բռնելէն վատ, ճամբան ալ կանաչ ստաներով կը ծածկէին, եւ խանդավառութեան աւելի բորբոքած միջոցին, վրայի ձորձորներն ալ ճամբուն վրայ Յիսուսի անցնելու անգերը իբր դորդ կը սփռէին: Արտաքին ցոյցերէն աւելի նշանաւոր էին երգուած օրհնութիւնները. Ովսամնա բարձրելոյն: Օրհնութիւն որդոյ Դուքի: Օրհնելալ որ գայ յամուն Տեառն: Օրհնելալ ի բարձուն: Օրհնելալ որ գտող յամուն Տեառն: Օրհնելալ բազաւորութիւնդ եկեալ որ մերոյ Դուքի: Խաղաղութիւն յերկրին եւ վառք ի բարձուն: Ովսամնա: Ամէնն ալ իրարու նման խմաստներ ունին, եւ ինքնաբերաբար բխած հոտաչանքներու արտայայտութիւններ են, եւ Աստուծոյ ուղղուած օրհնութիւններ, սրտնք մեծ յաջողութեան մը առթիւ կ'երգուին իբր խնդութեան նշանակ: Ովսամնա երբայկերէն բաւը այսոյիսի առիթներու համար հրէական սովորութեամբ նուիրապործուած ըստ մըն էր, եւ մեծ առիթներուն կը դստածուէր, եւ Ժողովուրդը ինքնաբերաբար այդ մեծ առիթին ալ կը կրկնէր, Յիսուսի վրայ իւր մեծ ըմբոստումը կը վկայէր: Այս բառին նախնական ձեւը կը կարծուի Ովսամնա, եւ կը թարգմանուի Աղաչեմ փրկեալ, բայց վերջէն Ովսամնա ձեւն է առած եւ նշանակութիւնն ալ փոխուած է, եւ եղած է Օրհնեացի, Օրհնելալ լիցի: Այդ խմատով է որ քրիստոնէից մէջ ալ դործածական եղած է եւ ամէն եկեղեցիներէ անխախտ կը դործածուի: Այդ օրհնարանութեանց խմատը ընդհանուր առմամբ կը ցուցնէ Ժողովուրդին կողմէ Յիսուսը իբր Մեծիա հանչնալու զգացումը, ինչ որ դրուցուած բառերու իւրաքանչիւրին մէջ ալ կը տեսնուի, եւ աւելի սրբաբարձութեան պէտք չի թողուր: Այսպիսի խանդավառութեան ցոյց մըն ալ ուղեցին ընել Գալիլիացիք Բեթանիայի անապատին մէջ՝ հացերու հրաչքէն ետքը (Յ 98). բայց այն ատեն Յիսուս խոյս տալով ցոյցը արգիլեց. մինչ այս անգամ յօժարակամ համակերպեցաւ եւ հեծելութեան սրտապան ալ աւելցուց, սրովհետեւ իւր խաչի մտէն ասան պէտք էր որ աշխարհի առանջ իւր մեխալոյսութեան ճշմարտութիւնը վկայուէր: Ղուկասի մէջ կը կարգանք թէ օրհնարաններու մէջն էր Ամնուայն բողոքութիւն աշակերտացն, որ Ժողովուրդէն սարբերելով Երկտասաններուն վրայ կ'իմացուի, եւ կը յայտնէ թէ անոնք ալ Ժողովուրդեան երգերուն ձայնակցելով՝ սկսած էին սրբախոսութեամբ օրհնել զԱստուած ի ձայն մեծ: Վերջապէս նկատելի է Մատթէոսի եւ Յովհաննէսի կողմանէ գիտուած մարդարեւութեան լրումը: Զաքարիա դրած էր. Ահա բազաւոր քո գայ քեզ, հեզ եւ հեծեալ յէջ եւ յաւանակի իշոյ, կամ ըստ բնաղիբին. Ահա բազաւոր քո գայ առ քեզ, արդար եւ փրկիչ, նայն հեզ, եւ հեծեալ ի վերայ իշոյ եւ յաւանակի ձորոյ (Չաք. Թ. 9), եւ մարդարեւութիւնը կը կատարուէր այս առթիւ, Առկայն Յովհաննէս կը խոստովանի թէ այն ատեն այս բանը չլիչեցին, եւ միայն Յիսուսի յարութենէն ետքը զրացին, եւ յայնմամ յիշեցին թէ այն էր որ գրեալն էր վասն նրա, եւ գայն արտաին նմա:

# ԱՐԺԵՒՈՐԵՆՔ ԱՌԱԳ ԵՄԲԱԹԸ ԳԻՏԱԿԻՑ ԵՒ ՀԱՌԱՏԱԽՈՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

## Ա. ԾԱՂԿԱԶՄԵՐԴ

Յիսուսի Յաղթութեան օրն է ան: Երուսաղէմը՝ թագաւորներու եւ մարգարէներու այդ բաղաբը, "Ուսանա" ներով կ'ընդունէր զինք որպէս նոր Քրիստոս, ԱՅՍՄԱՐԱՐ եւ ՓՐԿԻՉ: Մանուկներ եւ ծերունիներ կը դիմաւորեն աւանակի մը վրայ նստած ինչ եւ խոնարհ: Իոզիններու արքան: Երուսաղէմ մտնելէն առաջ, Յիսուս կը բանայ աչքերը կոյր մարդու մը անոր սրտին խորունկ հաւատքը տեսնելով: Իսկ Երուսաղէմ մուտքէն ետք Տէրը տաճարէն դուրս կը վտարէ շահամոլ եւ առեւտուրով զբաղած մարդիկը ըսելով. - " Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի" կ'ըսէ Աստուած:

Ի՞նչ արարողութիւններ պիտի կատարուին ծաղկազարդին:

1.- Եկեղեցին պիտի զարդարուի ձիթնիներու եւ արմաւենիներու ծիւղերով, որոնք խաղաղութիւնն ու կեանքը կը խորհրդանշեն: Հաւատացեալներ անոնցմէ բաժին մը տուն պիտի տանին, որպէսզի խաղաղ եւ սիրոյ կեանքով օրհնուին իրենց ընտանեկան օճախներն ու զաւակները:

2.- Առաւօտեան ժամերգութեան աւարտին պիտի կատարուի "Անդատան": Այս արարողութեամբ «Ս. թաշիւ եւ Ս. Աւետարանաւ» կ'օրհնուին աշխարհի չորս կողմերը: Անդատան կատարելով պիտի աղօթենք որ ինչպէս Երուսաղէմ ցնծութեամբ ընդունեց նոր եւ խոնարհ Արքան, աշխարհի չորս ծագերուն ալ ընդունուի եւ մեծարուի մեր Տէրը Յիսուս:

3.- Սուրբ Պատարագի սկիզբին, հետզհետէ ընդհանրացած սովորութեամբ, քահանային թափօրով եկեղեցւոյ մէջ շրջան ըրած ժամանակ, իր առջեւէն կը քալեն մոմեր, ձիթնիի եւ արմաւենիի ծիւղեր բռնած երախաներ, նորածին մանուկներ զրկած ծնողներ եւ ուխտ ըրած հաւատացեալներ: Այդ սովորութիւնը ընդհանրացնելով, պատարագիչ իոզեւորականներ պիտի հրաւիրեն ներկայ ժողովուրդը, մանաւանդ երախաները մասնակցելու թափօրին:

2եր զաւակները եկեղեցի տանելով թափօրին հետ քալեցէք: Այդ պիտի խորհրդանշէ այն իրողութիւնը որ եկեղեցին, ԱՅՍՈՐ ԱԼ, ԸՆԴ-ԱՌԱՋ Կ'ԵՐԹԱՅ ՅԻՍՈՒՍԻ, Ձինք կ'ընդունի որպէս նոր օրերու թագաւոր եւ պատրաստ է հնազանդելու Աստուծոյ անունով եկող Օծեալի պատւէրներուն պատգամներուն:

4.- Սուրբ Պատարագին բոլոր սրտանց պէտք է աղօթենք որ Աստուած բանայ մեր մտքին, հոգիին եւ խղճին աչքերը: Բժշկէ մեր քարոյական կուրութիւնը որպէսզի լաւ ճանչնանք մեր Փրկիչը: Ժիշտ հասկնանք իր փրկարար Աւետարանը եւ միտք պահենք իր սուրբ պատուիրանները:

5.- Երեկոյեան տեղի պիտի ունենայ երեկոյեան աղօթք: Դարձեալ ԱՆԴԱՏԱՆ պիտի կատարուի, Աստուծոյ զթողատ սէրը, շնորհքներն ու օրհնութիւնը բաշխելու աշխարհի չորս կողմ գրուած մարդկութեան: Կրկին պիտի երգուին ծաղկազարդի յատուկ շարականներ, այս անգամ դանդաղ եւ խոհուն է տեղծել խոկումի մթնոլորտ, որպէսզի հաւատացեալներ մտածեն թէ Յիսուս Երուսաղէմ եկաւ ոչ թէ քաղաք մը զրաւելու, այլ տիրելու մեր հոգիներուն եւ քաղցրացնելու մեր կեանքը: Ծաղկազարդի Կիրակին կը կոչուի նաեւ ԳԱԼՈՒՍ: Յիսուսի ԳԱԼԸ

Մեզի, Մեզի ՀԱՄԱՐ, Մեր Հոգիներդուն Մէջ, Մեր Կեանքին Մէջ Բնակե-  
լոռ Հեռանկարով:

5.- Ժամերգութենէն վերջ պիտի կատարուի ԴՌՆԲԱՅՇԷ: ԱՅՍ ԱՐԱ-  
ՐՈՂՈՒԹԻՒՆԸ ՅԱՏՈՒՅ է ՄԻԱՅՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ: Կը խորհրդանշէ Յիսու-  
սի ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ եւ ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ: Յաճախ կը մոռնանք որ  
Յիսուս ներկայ է այս աշխարհի մէջ եւ կը դիտէ մեր կեանքը: Բայց  
յստակ պատգամած է մեզի որ օր մը ՅԱՅՏՆԱՊԷՍ ԿՐԿԻՆ ՊԻՏՐ ԳԱՅ: Այդ  
օրը պիտի ըլլայ ԴԱՏԱՍՏԱՆԻ օր, երբ ոչինչ կրնանք ծածկել կամ գաղտ-  
նի պահել:

ԴՌՆԲԱՅՇԷԻՆ աւագագոյն եկեղեցականը ծունկի կու գայ ծածկուած  
խորանի վարագոյրին առջեւ: Այդ պահուն մենք մեզ պէտք է զգանք Աս-  
տուծոյ դատաստանին առջեւ եւ սրտանց կրկնենք քահանային աղաչանքը.-  
Տէր, քաց մեզի ոգորմութեան դուռը:

Վարագոյրին ետեւէն մեզի կը յիշեցուի որ արդարները միայն  
կրնան ներս մտնել Աստուծոյ պատկանող արդարութեան դռնէն:

Բոլորի անուկով ծնկաչոք հոգեւորականը կը խոստովանի թէ անմեղ  
մարդ չկայ: Խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ ալ կարելի է Աստու-  
ծոյ դռնէն ներս մտնել:

Այն ատեն միայն վարագոյրը կը բացուի հաւատացեալներուն առ-  
ջեւ: Որով պէտք է սրտանց աղօթել որ ոչ միայն մենք, այլ համայն  
մարդկութիւնը խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ արժանի ըլլայ Աս-  
տուծոյ լուսեղէն եւ սուրբ տեսութեան:

Վերջին դատաստանի յիշատակը, դատապարտութենէ աւելի փրկութեան,  
վերանորոգումի եւ ապաշխարութեան առիթ է հայ հաւատացեալին համար:

Բ. ԱՌԱԳ ԵՐԿՐՈՒՇԱԲԹԻ

Աւագ Երկուշաբթի մեր եկեղեցիներու մէջ առաւօտ եւ երեկոյ  
աստուածաշնչական ընթերցումներով նոխացուած ժամերգութիւններ կը  
կատարուին: Շարականներն ու ընթերցուածները մեզի կը յիշեցնեն  
ստեղծագործութեան պատմութիւնը, մարդուն մեղանշումը, Յիսուսի  
Երուսաղէմի մէջ ունեցած մտերիմ զրոյցը իր աշակերտներուն հետ եւ  
անպտուղ թզենիին չորացումը:

Հաւատացեալներ պարտին այս աղօթքներու ընթացքին յիշել որ  
իրենք ստեղծուած են Աստուծոյ պատկերին համաձայն: Ըննեն եւ տես-  
նեն թէ իրենց խորհուրդներով եւ ապրումներով կը նմանի՞ն Աստու-  
ծոյ: Ապա ապաշխարութեան ոգիով պէտք է Զանն ծերբազատուիլ շար  
մտածումներէ եւ զգացումներէ որպէսզի վերանորոգուին իրենց իրաւ  
պատկերին մէջ եւ իրենց սրտերը վերածեն Աստուծոյ նուիրուած մա-  
քուր տաճարներու:



4. ԱԻԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Յիշատակ է տասը կուսանաց: Աւետարանը մեզի կը պատմէ Յիսուսի խօսած մէկ առակը, որուն մէջ տասը կոյսեր հարսանիքի կը հրաւիրուին: Անոնցմէ հինգը կը զրկուին հարսանեկան ուրախութիւններէն, որովհետեւ տեւ անհրաժեշտ պատրաստութիւնը չեն կատարեր եւ իրենց լապտերներուն ձէթը կը պակսի:

Բոլոր շարականներն ու ընթերցուածները կը խօսին վերջին Դաստանի մասին եւ կոչ կ'ուղղեն մեզի արթուն եւ իմաստուն ըլլալու եւ կորստեան չմատնուելու:

- "Տէր, շնորհէ մեզի արթնութիւն, իմաստուն կոյսերուն հետ եւ մեր հոգիի լապտերները պայծառացուր":

Նոյ նահապետին յիշատակն ալ կը միանայ Աւագ Երեքշաբթի օրուն, մեզի յիշեցնելու որ քրիստոնէական մեր հաւատքը առիթ կ'ընծայէ մեզի կեանքին նոր սկիզբ, նոր թափ եւ նոր հոգի տալու:

5. ԱԻԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Այս օրուն ընթացքին, մեր աղօթքներուն մէջ կը յիշենք երկու իրողութիւններ. -

ա. - Հրեայ մեծամեծներ եւ քահանայապետներ, Յուդայի հետ կը ծրարեն եւ կը դաւադրեն զՅիսուս մատնել եւ խաչել: Մեծ վարդապետին աշակերտներէն մէկը ՅՕ արծաթի փոխարէն կորստեան կը մատնէ իր Տէրը: Ուրացումի եւ անհաւատարմութեան ամենէն խօսուն պատկերն է այս. - Արծաթամու եւ շահամու նկատումներով կորսնցնել յաւիտենական իրաւ արժէքները:

բ. - Միւս կողմէ սակայն, մեղաւոր կին մը, թանկագին իւղի սըրլակ մը առած, կու գայ կը լուայ Յիսուսի ոտքերը եւ իր մագրով կը շորցնէ զանոնք: Հաւատարմութեան եւ սիրոյ գեղեցկագոյն օրինակն ալ այս է:

Մեր կեանքը վերլուծելով, կարծէք եկեղեցին հարց կու տայ իր հաւատացեալներուն,

- Դուք ի՞նչ կ'ընէք որպէս Աստուծոյ զաւակ: Դրամի համար, հաճոյքի համար, փառքի եւ դիրքի համար ձեր Տէրը կը մատնէ՞ք թէ հաւատարմութեամբ եւ սիրով, արգարօրէն շահած ձեր թանկագին ստացւածքները կը գործածէք աստուածապաշտութեան համար եւ մարդկութեան օգտակար ըլլալու սիրոյն:

6. ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Չորս առանձին եւ իմաստով հարուստ արարողութիւններ տեղի կ'ունենան մեր եկեղեցւոյ մէջ որոնք կը յորդին մեր հոգեւոր եւ երաժշտական ծառանգութեամբ: Ամենէն տպաւորիչ եւ ազդու շարականներն ու

մեղեցիկները կարծէք Աւագ Հինգշաբթի օրուան վերապահուած են:

1.- Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւն:

Հայ մարդուն առաւօտ կանուխ մատուցած աղօթքին մէջ, տիրական եւ գլխաւոր մտածումը Զրիստոսի սիրոյն եւ խոնարհութեան գործած տրպաւորութիւնն է: Յիսուսի ծառայական կեանքը այնքան ներշնչիչ է մեզի համար, որ յաճախ պէտք է յիշենք իր հետեւեալ խօսքը.

- "Քանի լոյսը ձեզի հետ է, հաւատացէք լոյսին, որպէսզի լոյսի զաւակներ ըլլաք" Յովհ.

2.- Կարգ Ապաշխարութեան եւ Ս. Հաղորդութեան

Խոստովանութեան եւ թողութեան աղաչանքներով կը պատրաստուինք յիշել Վերջին Ընթրիքը որուն ընթացքին մեր Տէրը հաստատեց Ս. Հաղորդութեան թորհուրդը:

Կը կարդացուին քրիստոնէական եկեղեցւոյ մեծագոյն հայրապետներէն Ս. Բարսեղ Անսարացիի եւ Յովհաննէս Ռսկեքերանի Ճառերը, որոնք մեզի կը բացատրեն Զրիստոսի մարգեղութեան եւ փրկագործութեան խորհուրդները:

Ս. Պատարագը կը վերակենդանացնէ այն սրբազան պահը երբ Զրիստոս իր հրաշագործ ձեռքերով, հացն ու զինին օրհնեց, զանոնք իր աշակերտներուն տուաւ որպէս իր փրկարար մարմինն ու արիւնը եւ թելադրեց նոյնը կատարել իր յիշատակին:

Եթէ ուրիշ առիթներով հաղորդութիւն չենք առներ, զոնէ Աւագ Հինգշաբթի, վերջին Ընթրիքի յիշատակը տօնախմբող եւ պանծացնող այս պատարագին, պէտք է անպայման մասնակցիլ երկիւղածութեամբ եւ եւ ապաշխարութեամբ:

3.- Կարգ Ռոնլուայի

Այս արարողութիւնը թատերական եւ զրաւիչ ներկայացումն է Ս. Աւետարանի այն հատուածին որուն մէջ մեզի կը նկարագրուի թէ ի՞նչպէս Յիսուս իր աշակերտներուն ոտքերը լուաց:

Մեծ ժողովրդականութիւն վայելող աղօթքի այս պահը դարձեալ լեցուն է աղօթքներով, շարականներով եւ ընթերցուածներով, որոնք բոլորն ալ մեզի կը ներշնչեն Զրիստոսի տուած խոնարհութեան դասը:

Մեր մեծանուն վարդապետներէն Յովհաննէս Պլուզ Երզնկացի, Ճառ մը գրած է այս առիթէ, ներշնչուած Յովհաննէս Առաքելի առաջին ընդհանրական նամակի շորթորդ գլուխէն: Այդ Ճառը կը կարդացուի ռոնլուայէն առաջ, որուն գլխաւոր պատգամը հետեւեալն է.

- Աստուած սէր է: Մեր Աստուծոյ հանդէպ ունեցած սէրը կը ճըշ-  
մարտուի մեր նմանները՝ եղբայրները սիրելով: Ան որ իր եղբայրը կը  
սիրէ, Աստուծոյ մէջ կը բնակի՝ եւ Աստուած ալ իր մէջ:

Արարողութեան հիմնական բաժինը անշուշտ, ներկայ աւագագոյն  
հոգեւորականին կողմէ իր ստորագաս պաշտօնակիցներուն՝ եւ երեսնե-  
րուն ոտքերը լուալու արարքն է: Ոտքերու լուացումէն ետք, ենթա-  
կաներ կը համբուրեն լուացողին աջը: Ապա ան կը կարդայ օրուան պատ-  
գամը բերող Աւետարանի հետեւեալ հատուածը:

- "Եթէ ես, որ տէր եմ եւ վարդապետ, ձեր ոտքերը լուագի,  
դուք ալ պարտաւոր էք իրարու ոտք լուալ: Օրինակ մը տուի ձեզի,  
որպէսզի ինչ որ ես կատարեցի, դուք ալ նոյնը ընէք" (Յովհ. ԺԳ. 14-15)

Պատրաստ պիտի ըլլա՞նք այս օրինակը որդեգրելու: Կրնա՞նք  
խոնարհութեան այս դասը ամէն օր կիրարկել: Այդ է կարեւորը:

4. - Կարգ շարչարանաց

Խաւարման գիշեր կամ խաւարում անունով ծանօթ այս արա-  
րողութիւնը կը կատարենք Աւագ Հինգշաբթիի գիշերը: Զրիստոսի մատ-  
նութեան եւ շարչարանքի յիշատակը մեզի կը բերէ: Շարականներն ու  
ընթերցումները մեզի կը պատմեն Յիսուսի ձերբակալութիւնը, դատա-  
տանը, շարչարանքներն ու զանակոծութիւնը եւ Պետրոս առաքեալի ու-  
րացումը: "Փառք ու Բարձունս"ի երգեցողութեան ժամանակ ալ եկեղեց-  
ւոյ բոլոր լոյսերը կը մարին քացի այն մոմէն որ կը խորհրդանշէ Յի-  
սուսի ներկայութիւնը:

Եօթ աւետարաններ կը կարդացուին, որոնց ընթացքին մէջ ընդ  
մէջ կ'երգուին Շնորհալի Հայրապետին կողմէ յօրինուած "Այսօր Անճառ" և  
երգին 36 համարները:

Հակառակ իր կրած դառն յուսախաբութիւններուն եւ անտանելի տան-  
ջանքներուն, մեր Տիրոջ պատուէրը կը մնայ նոյնը.

- "Այս է իմ պատուէրը՝ սիրեցէք զիրար այնպէս ինչպէս որ ես  
ձեզ սիրեցի: Ասկէ աւելի մեծ սէր չկայ, երբ մէկը իր անձը կը զոհէ  
իր քարեկամներուն համար: Դուք իմ քարեկամներս էք, եթէ կը կատա-  
րէք ինչ որ կը պատուիրեմ ձեզի: Այս է իմ պատուէրս. սիրեցէք զի-  
րար" Յովհ. ԺԻ. 12, 14, 17 :

ԱՒԱԳ ՇԱՐԱԹ ՕՐ

ՃՐԱԳԱԼՈՅՑ

Սուրբ շարթուան ընդհանրապէս յուզիչ, երբեմն նոյնիսկ ճնշիչ մթնոլորտէն ետք, Աւագ Շարաթ օրը պատրաստութեան օրն է վերջապէս Զատիկը նախատօնելու:

Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ տարուան ընթացքին երկու անգամ ՃՐԱԳԱԼՈՅՑ է.

Ս. Ծնունդի նախօրէին,

Ս. Յարութեան նախօրէին:

Ճրագալոյցը կը նկատուի ամբողջ տարուան մէջ կրօնական ամենէն առինքնող եւ սպասուած պահերէն մին:

Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ, անկախ որոշ տօներու պարտադրանքէն, Ս. Պատարագը ըստ սովորութեան կը մատուցուի ամէն Կիրակի կէսօրէ առաջ:


Քացառութիւն են սակայն, Ճրագալոյցներուն մատուցուած պատարագի պահերը: Տեղի կ'ունենան իրիկունները եւ բացառիկ այդ պահերը, ընդունուած են նոյնքան բացառիկ տրամադրութիւններով: Հայ հաւատացեալներ բոլոր ժամանակներուն մէջ, խանդաղատանք ցոյց տուած են իրիկնային - Ճրագալոյցին - մատուցուող, պատարագի արարողութիւններուն նկատմամբ:

Այնուհետեւ, եկեղեցական կարգով արդէն Միաշարաթ — Կիրակի — է: Վերջ կը գտնէ նաեւ երկարատեւ պահքը:

\* \* \*

Ընտանիքներ համախումբ եւ ըստ սովորութեան կ'ընթրեն տապկուած սղանախոյ կերակուրը վրան ձուկ:

Ճոխ պայմաններու մէջ նաեւ ձուկ եւ տեսակաւոր կարկանդակներ...:



Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Գրծ

1.15-26: Մր 16.2-8;

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ  
(16.1-8)

1 Ծարաթ օրը երբ անցաւ, Մարիամ Մագդաղենացին, Մարիամ՝ Յակոբի մայրը եւ Սաղոմէն գացին խաւովեր գնացին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օծեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ, արեւածային, գերեզման երան: «Ո՞վ պիտի գործէ գերեզմանի մուտքին դրուած քարը», կը հարցնէին իրարու, որովհետեւ քարը շատ մեծ էր: Սակայն երբ նայեցան, տեսան որ քարը արդէն իսկ դուրսուած էր: Գերեզմանէն ներս մտան եւ ձերմակ զգեստ հագած երկտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր: Մարտոփեցան: Երկտասարդը լատաւ սննոց. «Մի՛ վախճաք, գիտե՛մ որ խաշտուած նազարեցի Յիսուսը կը փնտռէք: Բայց չո՞ւ չէ, յարութիւն առաւ: Տեսէ՛ք, զինք հոս գրած էին: Այժմ գացէք, լսէք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա Յիսուս ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլիա. հոն պիտի տեսնէք զինք, ինչպէս որ ըսած էր ձեզի՞»:

2 Երբ ստիկա լսեցին՝, դուրս փախան գերեզմանէն, զարհուրած եւ ապշահար, ու ոչ մէկուն բան մը բսին, որովհետեւ կը վախնային:

16 And when the sabbath was past, Mary Mäg'da-lēne, and Mary the mother of James, and Salō'mē, bought spices, so that they might go and anoint him.\* 2 And very early on the first day of the week they went to the tomb when the sun had risen. 3 And they were saying to one another, "Who will roll away the stone for us from the door of the tomb?" 4 And looking up, they saw that the stone was rolled back; for it was very large. 5 And entering the tomb, they saw a young man sitting on the right side, dressed in a white robe; and they were amazed. 6 And he said to them, "Do not be amazed; you seek Jesus of Nazareth, who was crucified. He has risen, he is not here; see the place where they laid him. 7 But go, tell his disciples and Peter that he is going before you to Galilee; there you will see him, as he told you." 8 And they went out and fled from the tomb; for trembling and astonishment had come upon them; and they said nothing to any one, for they were afraid.

Բ.— Յարութեան փաստեր:

1. Չորս Աւետարաններ միաձայնութեամբ կը պատմեն թէ Յիսուս յարութիւն առած է: Մանրամասնութիւններու մէջ թէեւ իրարմէ կը տարբերին, բայց ամէնն ալ միեւնոյն իրականութիւնը կը շեշտեն:

2. Պօղոս, ըլլալով քրիստոնէական առաջին եկեղեցւոյ կարեւոր առաջնորդներէն մին, շերտ պաշտպան կը հանդիսանայ Յիսուսի յարութեան ստուգութեան: Կորնթացիներուն գրած իր նամակին մէջ Յիսուսի յարութեան ականատես վկաներէն սմանց տակաւին ողջ ըլլալը կը յիշէ (Ա. Կորն. ԺԵ. 6):

3. Առաջին պարու քրիստոնէական երեք կարեւոր կեդրոններուն, — Բրուսաղէմի, Ազիքսանդրիոյ եւ Անտիոքի մէջ, կը հաւատային Յիսուսի յարութեան:

4. Առաքեալներու եւ առաջին քրիստոնէաներու քարոզութեան նիւթը Յիսուսի յարութիւնն էր: Առաքեալ ըլլալ կը նշանակէր Յիսուսի յարութեան վկայ ըլլալ: Աւետարանի քարոզիչ ըլլալ կը նշանակէր Յիսուսի յարութիւնը տեսնել:

5. Այլ-քրիստոնէաց, Յիսուսի ժամանակակից հրեայ մեծ պատմիչ՝ Յովակիտոս, իր «Հնութիւնք Հրէից» գիրքին մէջ առաջն կ'ըսէ. «Այս օրերս Յիսուս անուն արքայ մարդ մը ապրեցաւ. մեր մեծերը թէեւ զինքը սպաննեցին բայց ինքը երեք օր վերջը կենդանի երեւցաւ» (Գիրք ԺԲ., Գլ. Գ., հատ. 3):

Գ.— Յարութեան ճշտակութիւնը:

Յիսուսի յարութիւնը ունի մէկէ աւելի նշանակութիւններ քրիստոնէոյ հաւատացեալներուն համար:

- 1. Յիսուսի յարութիւնը մեծադոյն փոստարն է հոգիի անմահութեան:
- 2. Յիսուսի յարութիւնը բարոյական սկզբունքներուն շիրտ ոյժին վրայ տարած յայթանակը կը ծանուցանէ:
- 3. Յիսուսի յարութիւնը գրաւականն է մեակեց յարութեան:



ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԱՏԹ. ՈՂ. 1-30: ՄԱՐԿ. ԺԶ. 1-18: ՂՈՒԿ. ԽԲ. 1-48: ՍՈՒԷ. Ի. 1-18)

Ա. — Յարութեան գեպը:

Յիսուսի յարութիւնը անդի տեսնելու կիրակի (Միաշտորմ) առաւել: Մի քանի կիներ կիրակի օր կանուխ Յիսուսի գերեզմանը կու գան տնուշանալ իւզերով եւ խաւովերով, եւ անոս երկրաշարժ մը տեղի կ'առնենայ եւ հրեշտակ մը կը գլտարէ գերեզմանին վրայ դրուած մեծ վէճը եւ պանապանները կը գործարբին:

Հրեշտակն ապա դատուելով կիներուն կ'ըսէ. «Դուք մի՛ վախճաք, քանզի գիտե՛մ թէ իտչեալ Յիսուսը կը փնտռէք, սնիկա հոս չէ այլ յարութիւն առաւ, ինչպէս ինք ըսած էր, եկէ՛ք եւ տեսէք իր դրուած տեղը, եւ շատ գացէք եւ իր աշակերտներուն յար տուէք թէ ան մեռելներէն յարութիւն առաւ, եւ ան ձեզմէ առաջ Գալիլիա պիտի երթայ եւ հոն պիտի տեսնէք զինքը»:

Իւզարեր կանայք անոյ եւ ուրախութիւնով լիցուած կ'երթան պատմելու աշակերտներուն, բայց ճամբուն վրայ Յիսուս իրենց կը հանդիպի եւ ողջուն կու առայ: Ապա այլ եւ այլ առիթներով կ'երթի իր աշակերտներուն եւ ուրիշ հաւատացեալներու, եւ առաջն անոնք կը համոզուին թէ իրենց Տէրը յարութիւն առնելով յարութիւն տարած է մահուան վրայ:

Մարտիրոսացի մեկնելն ետքը դերեղմանին մօտ մնացող իւզարները պահ մը եւս կը սպասեն՝ Յիսուսի համար պատրաստած ու բերած իւզարներն ու խունիկներն ձեռաւրնին, շառնոց ինչ ընելիքնին որոշել կարենալու։ Մարտիրոսացի բերելիք լուրին սպասելով կեցած ատեննին, հետաքրքրութիւննին առջեւ կը մղեն, գերեզմանին տակի մօտ կու գան, եւ տեսնելով որ ամէն կողմ լուսթիւն է, վերջապէս դերեղմանի արտաքին սենեակին մէջն ալ մտնելու կը համարձակին։ Այնպէս գլորուած կախարչին վրայ դուհապան նստող հրեշտակը, որ վիճաւորները սարտափի էր մտնած, հեղ եւ գրաւիչ կերպարանքով կ'երեւի իւզարերներուն։ Հրեշտակը լուսաւոր կերպարան եւ սպիտակ պղեստներ սնէր, եւ նոյն վէմին վրայ նստած էր, ներքին դերեղմանի գրան աջ կողմը։ Իւզարները յանկարծակիս տեսիլքէն աշտայլեցան, եւ զսիրտընցան։ Բայց հրեշտակը ժպտուն դիմօք եւ անոյշ խօսքերով դանձր քաջալերեց. «Մի՛ վախնաք, լսաւ, մի՛ շփոթիք. դիտե՛մ որ խաչիչեալ Յիսուսի կտեւէն եկած էք, եւ անար մարմինը կը փնտէ՛ք՝ պատշաճ յարգանքը ընծայելու. բայց նա աշտակ աշտեւ չկայ, նա յարեաւ, չէ սատ, նա մեռեալ չէ, նա կենդանի է, մարմինն ալ չկայ. ներս մտէ՛ք, տեսէ՛ք, որ մարմինն գրուած տեղն ալ գտաւրի է»։

Հրեշտակային տեսիլը որ առաջ շփոթութիւն էր պատճառած, հետք-հետք մեղմացաւ իւզարներնեւ աչքին, անոյշ խօսքերը, քաջալերիչ ձայնը, դրախչ կերպը դերեղման հանդարտեցուցին, եւ հրեշտակի առաջաբիւն անասլու, եւ ներքին գերեզմանն ալ մտնելու եւ տեսնելու համարձակեցան. Եւ մտեալ ի ներքս ոչ զոմն գտարմինն Տեսնեց Յիսուսի։ Սակոյն նոր երեւոյթ մը նորէն դերեղման շփոթեցուց։ Երկու լուսաւոր պղեստներով սնծեր, հարկաւ երկու հրեշտակներ կային Յիսուսի մարմինն եղած տեղին Երկու ծայրերը, մին գրան եւ միւսը ստղին կողմը։ Ատնոց լուսաւոր կերպարանն ալ ստտակ սպաւորութեան դարձեց գերեզմանին ներսը մտնողներուն վրայ, շփոթեցան եւ գահի կարան, եւ աշտեղնին անոնց լուսաւոր տեսիլքին չզիմանալով՝ խոնարհեցաւցին գերեաւ խրեանց յերկիր։ Երկու հրեշտակներն ալ միեւնոյն աւետիսը կրկնեցին իւզարներնեւ. «Քննչ եկեր էք աշտեղ, մեռելներու դերեղմանին մէջ կենդանի մէկ մը փնտտելու. չէ սատ, այլ յարեաւ»։

Իւզարներն նորէն ամէնքն ալ սրտաքին սենեակին մէջն են, ուր էր վէմին վրայ նստող եւ դերեղմանին դրան սգանգանութեան կեցող հրեշտակը։ Ան նորէն կը խօսի իւզարներնեւ. «Ահա տեսաք եւ համարուեցաք որ այլեւս Յիսուս աշտեղ չէ, եւ թէ յարութիւն առած է։ Պէտք է միտաւրնիդ բերէ՛ք որ Գալիլիայ մէջ քարոսութիւննիդ ըրած ատենն խաչուիլը, մեռնիլը եւ նորէն յարութիւն առնիլը յսած էք. ահա՛ խօսքը կատարուած է։ Գացէ՛ք, տյռ ուտեալը բոլոր առաքեալներուն տուէ՛ք, Պետրոսն ալ դանց մի՛ ընէ՛ք, թէպէտ նա պահ մը իւր աստքերութիւնը սպասեց ըլլայ։ Ատնոց լուսէ՛ք որ յարուցեալ Յիսուսը նորէն Գալիլիա ալ պիտի երթայ, եւ այնտեղ նորէն ստաքեալներուն հետ պիտի տեսակցի։ Երբոր Յիսուս առջեւէն երթայ, իրենք ալ ետեւէն Գալիլիա երթան, որ անոր հետ ահմուին։ Ինչ որ լսի, մի՛ մոռնաք. Ահա ասացի ձեզ»։

Իւզարներն իրարու հակառակ սպաւորութեանց ներքեւ մնացին։ Մէկ կողմէ սարտափ, միւս կողմէ ուրախութիւն. մէկ կողմէ պատկառանք, միւս կողմէ քաջալերութիւն. մէկ կողմէ վարանում, միւս կողմէ յարգորանք. եւ այդ սպաւորութեանց ճերքն սրան գերեզմանէն հեւանալ, Հրեշտակին խօսքով առաքեալներուն պէտք էր երթալին, բայց երեւակայական տեսարանի մը առջեւ չէին եղած արդեօք։ Յիսուսի կանուխէն լսածները կը յիշէին։ Բայց խիտկան եղելութիւնը կատարուած էր արդեօք։ Այդ էր իւզարներնեւ բուն վիճակը, երբոր կամոց-կամաց Արեւմտեայի պարտէզէն կլլելով երուսապէմի ձամբան կը բռնէին։

**Մերելի Հայրգիք.**

Ապրիլ 24-ին, մայր հայրենիքն մինչև սփիւռքի շորս ծագերը, հայ ժողովուրդը անգամ մը եւս պիտի խոնարհի մեր մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակին առջեւ:

տարիներ անցած են այդ չարաշուք թուականէն, երբ քաղաքակիրթ կոչուած ազգերու անտարբեր աչքերուն առջեւ՝ Արեւմտեան Հայաստանի գրեթէ ամբողջ բնակչութիւնը դո՛ւր ղնաց Մեծ Ռեիբին: Ո՞վ կրնայ մոռնալ որ այդ տարին, Համաթուրանական պետութիւն մը հիմնելու իր ծրագրի ճամբուն վրայ, Թուրքիա դիւային սառնասրտութեամբ դաւեց եւ իրազօրծեց ամբողջ ազգ մը ոչնչացնելու քաղաքականութիւնը, այն՝ որ ծանօթ է խղճի տէր մարդկութեան համար իբրեւ «20-րդ դարու առաջին ցեղասպանութիւն»:

չկայ ու չի կրնար ըլլալ հայ մը՝ որ չչիչէ ու չտապնայի Ապրիլ 24-ի խորհուրդով: Որովհետեւ՝ հայ ժողովուրդի հաւաքական դիտակցութեան եւ հոգեխառնութեան վրայ իր կնիքը դրած է այդ սեւ թուականը, եւ մինք, ինչ որ ենք ու ինչ որ չենք՝ կը պարտինք Ապրիլ 24-ին:

Ուստի, իբրեւ նախանձանդիր Հայերու Ապրիլ 24-ի տարեդարձը չենք կրնար նկատել սովորական օր մէ:

- Յոյսի օր է Ապրիլ 24-ը:
- Աղօթ-Քի օր է Ապրիլ 24-ը:
- Յիշատակի օր է Ապրիլ 24-ը:

**Բայց՝**

- Ապրիլ 24-ը մեր մոր կեանքի սկիզբն է:
- Ապրիլ 24-ը մեր ժողովուրդի պանակընքի օրն է:

Օրը՝ երբ պիտի ըսենք աշխարհի թէ կ'ԱՊՐԻ ԶԱՅԸ: Բայց հարկ է որ գիտնան թէ կ'ուզենք ապրիլ մեր հայրերու հողին վրայ, իբրեւ պետութիւն եւ ազգ՝ ո՛չ թէ բեկորացեալ ժողովուրդ, որ դատապարտուած է օտարացումի եւ այլասերման:

Հետեւաբար կոչ կ'ուզողենք մեր ժողովուրդի բոլոր դաւակներուն, որ Ապրիլ 24-ին իրենց խուռնեցում մասնակցութիւնը բերեն բոլոր այն կրօնական եւ ազգային ձեռնարկներուն, ոգեկոչումներուն, աղօթքի եւ խոկման պահերուն, պահանջատիրական հասցեներուն, որոնք կը կազմակերպուին իրենց շրջաններու մէջ:

**Չմեղցնենք մեր նահատակները:**

**Այլ՝ մեղմով ապրեցնենք զանո՛նք:**

Եւ թող Տէր Զօրի ամբողջներուն փոխարէն՝ Նիւ Եոթքի հրապարակներէն մինչեւ Լինքըն Սէնթրի Մշակոյթի կեդրոնը մեղմո՛վ քաշեն մեղմո՛վ յարութիւն առած եւ արդարութեան ծարաւի մեր նահատակները, երջանիկ՝ որ իւրաքանչիւր հայ Որդի պիտի ըսէ իր հօր, նահատակ Միամանթոյի կտակով:

«Ես եւթիւմզ եմ եւ սկիզբն եմ էօս վախճանիդ: Իմ մէջ է որ դուն, իմեր, կեանքէդ յետոյ պիտի ապրիս ...»:

Կ ' Ո Ի Խ Տ Ե Ն Ք մեր կեանատրեալ Աշխարհնրոմ սուրբ հայելիին դիմաց, մաքրել, գտել, եւ հարազատօրէն ինքնացնել եւ արժանատրել մեր հայութիւնը ի ապաս Աստուծոյ եւ մարդկութեան համայն աշխարհի:

Կ ' Ո Ի Խ Տ Ե Ն Ք վառ պահել մեր քրիստոնէական սուրբ եւ սրբարար հաւատքը մեր պաշտելի Հայց. եկեղեցոյ դարատր աւանդութեամբը հայօրէն դրոշմուած եւ հայատիպօրէն մեզ կազմատրող Քրիստոսի Աւետարանի գաղափարներուն, սկզբունքներուն եւ արժէքներուն ներգործութեան ոսկիացնող հորովը:

Կ ' Ո Ի Խ Տ Ե Ն Ք կեանդանի պահել մեր պապերուն ինքնութիւնը եւ անոր իրապատու գործութիւն եւ արտայայտչական շեշտ գեղեցկութիւն ընծայած մեր ոսկեղնիկ լեզուն՝ Մեսրոպեան գիրի անմաշելի հանդերձանքովը շքեղափայլ եւ մեր դպրութեան արժէքներովը հազարազամն, հայ դպրոցի պայծառակերպող բորայիմ մէջէն:

Կ ' Ո Ի Խ Տ Ե Ն Ք հարազատ պահել հայ ընտանիքը, մաքուր պահել ընտանեկան յարկերը մեր հայաշունչ, երդիքները մեր պապեմական, ընտանիքի հայալսել սրբութեան եւ սրտաուխանդրութեան ու զաւակներու տոկոմ եւ առողջ դաստիարակութեան առաքելութեան գիտակցութեամբն ու նախանձանդրութեամբը:

Կ ' Ո Ի Խ Տ Ե Ն Ք ամբակուր կառչած մնալ եւ շարանուն գնացքով առաջ տանի մեր ժողովուրդի արդար իրաւունքներն հետապնդման գործը, որովհետեւ մեր նահատակութեան գերագոյն իմաստը ազատութեան եւ արդարութեան որպէս գիմ մեր պատարագած կեանքն է, գոր այսօր մե՞նք պիտի շարունակենք մատուցել մեր կեանքով վասն փրկութեան ազգիս հայոց:

Կ ' Ո Ի Խ Տ Ե Ն Ք Տէր Զօրը միշտ կեանքով առլըցում պահել մեր ապրումներուն մէջ, եւ որպէս վկայութիւն մեր այս ոխտիմ՝ անա կը կանգնենք գեղակերտ Մատուռն այս նահատակաց, որպէս համբոյր երկմի եւ երկրի, որպէս դաշինք անխախտ ընդմէջ Աստուծոյ եւ հայութեան, անթեկանելի ոխտ սիրոյ, հաւատարմութեան, Ատիրումի եւ գոհողութեան, եւ որպէս աչք մշտարթուն եւ պայծառառես՝ բացուած դէպի ապագայ:

Շք. Է. օր Զատիկի: Յիշատակ գլխատման  
սրբոյն Յովհաննու Մկրտչին: Առ 8.4-11:  
Ես 40.3-8: Մղ 4.4-6: Գրծ 13.25-33: Մր  
6.14-29: Ճաշու գիրք եւ Աւետարան: Գրծ  
5.12-33: ՅԿ 2.14-26: ՅԿ 21.15-25:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ

(ՂԹԿ. Ա. 6-25, 57-80, ՄԻԼՏՔ. ԺԳ. 1-12)

Ա. — Կենսագրականը:

Յովհաննէս Մկրտիչ Զաքարիա քահանային և Եզրասթիթի դուստին էր, զոր սենեցան իրենց յառաջոցեաց օտարքին մէջ: Յովհաննէս, սլաւեւ եղնուոր, սնուցաստեան կեանք կը վարէր, ընտարութեամբ ժուծկուչ, անձնուրաց և սակաւագէտ էր:

Յիսուս տակաւին իր հանրային պաշտօնին չձեռնարկած՝ Յովհաննէս արդէն հրապարակ իջած էր ու կը քարոզէր և կ'ըրէր. «Ապաշխարեցի՛ք զի մօտեցած է Աստուծոյ թաղարութիւնը»:

Յովհաննէս շատ նմանութիւն ունէր Եզրային հետ, կ'ապրէր անոր մարգարէական շաւշուղ և անոր բարեպաշտական սքիզով:

Հերովդէս՝ իր եղբոր Փրիլպպոսի կնոջ հետ ապօրէն կեանք մը կը վարէր: Յովհաննէս յանդիմանեց զինքը այդ սխալ արարքին համար, և այս իսկ պատճառաւ քանտարկուեցաւ և ապա երիտասարդ հասակին գլուխտաւեցաւ:

Բ. — Մատուցած ծառայութիւնը:

1. Իր քարոզութիւններով ժողովուրդը ապաշխարութեան հրուերեց:

2. Մարգիկը Յորդանան գետին մէջ մը կըրտելով՝ առելի բարձր կեանքի մը՝ առաջնորդեց:

3. Քրիստոնէական կրօնի համար գետին պատրաստելով Սիսուսի Մեսիական գործը գիւրացուց:

Գ. — Եկարագիրքն ու լուրջութիւնը:

1. Անձնուրաց էր:

Յովհաննէս ինքնատիպ էր: Կեանքը կ'ապրէր այնպէս՝ ինչպէս ըմբռնած էր, ո՛չ աշխարհաօրէր և ո՛չ ևս անձնատէր էր, այլ բառին լուսաբան տառամով՝ մեռած էր այս աշխարհի սնուցաստեան իրենցում: Յիսուս իրեն աշակերտ եղողներուն երեք պայման կ'առաջարկէր. 1. անձնուրացութիւն, 2. խաղ կրել, և 3. իրեն հետևիլ (Մարկ. Ը. 34): Այս երեք պայմաններէն առաջինն ու հիմնականը անձնուրացութիւնն էր, զոր Յովհաննէս Մկրտիչ լիովին ըմբռնած էր:

Անձնուրացութիւն կը նշանակէ մեայուն արժեքներու ծրարանաւ համար անձը գրիչը ժամանակաւոր հանոյններէ, կրօնական ժառանգութեան սխալն հրամարիչ աշխարհիկ վայելքներէ, եւ կամ ուրիշներու նշանկութեան նպատեղու նպատակաւ անխուրիչ արարարական զոհարներութեան:

Նիւթապայտութենէ վեր ապրող գաղափարապաշտ մարգիկ ընկերանրացէս անձնուրաց էն, և բոլոր սիրտով իրենց խեղճին նըւերուած՝ կը մտնան յանախ իրենց արդար վայելքներն ու հաճոյքները: Աստիք առելի կը սիրեն հոգեկան ներքին գոնուակութիւնը քան թէ ընկերական ժամանակուսք հաճոյքները: Յովհաննէս տես աշուպոսի գաղափարապաշտ անձնուրացութիւն մըն էր:

Մովսէս ժողովուրդը պատրաստեց Քառանու երկիրը մ'անելու, Դուիթ աստղձ պատրաստեց Տաճարը շինելու, իսկ Յովհաննէս գետին պատրաստեց քրիստոնէութիւնը հաստատելու: Բայց ո՛չ Մովսէս մտաւ Քառանու երկիրը, ո՛չ Դուիթ շինեց տաճարը, և ո՛չ ևս Յովհաննէս կըրտու վայելիլ քրիստոնէական կրօնին բարեքները: Երեքն ալ սակայն ըրին նախապատրաստական դարձ մը որ արժանի է ամէն զնահատութեան:

2. Ճշմարտախոս էր:

Յովհաննէս անկտի մարդ էր, սրեւէ մէկօն ոչ կը քննէր, ո՛չ կը շողջարթէր, և ո՛չ ևս կը կեղծէր, այլ ուղղակի ճշմարտութիւնը կը խօսէր ամէն տանն ու ամէն տեղ: Երբ Հերովդէս թագաւորին ապօրէն կեանքը քննադատեց՝ չվարցաւ մտէն: Եւ այս իսկ պատճառաւ երիտասարդ հասակին գլխտաւեցաւ, բայց հագ չըրաւ, քանզի ճշմարտութեան համար կ'ապրէր, և ճշմարտութեան համար մեռնիլ իրեն ծանր չեկաւ:

Ճշմարտախոսութիւն կը նշանակէ իրողութիւնները հզամիւ պէս պատկեր, իրերը շիտակ դասել, մարդոց յանցանքները չժամկիչ, եւ խխոջի մայրին հուսաւորմ մեայ անկն անն ու անկն ճել:

Սառ խօսիլ բարոյական անկաւթի նշան է: Իրերը խեղաթիւրելով ներկայացնել ուրիշ բան չէ բայց եթէ հոգեկան աղքատութեան հետեւանք: Իսկ կոշտ առնելով արգարը հաղածել և անիրաւին իրաւունք սող վատութիւն մըն է պարզապէս: Ազնիւ նկարագիր ունեցող մը չի կրնար սակ, արժանապատըւութեան զգացում ունեցողը մտօթ կը համարի իր դրացին խօսել, և բարեկիրթ անձ մը՝ սխալ արարք մը արդարացնել իրեն համար նուստութիւն կը նկատէ բոցէ ի բոց: Ճշմարտութիւնը թէեւ կը վիրաւորէ բայց կը բուժէ միանշամայն: Սաղմոն կ'ըտէ. «Ճշմարտութիւնը ծախու առ ու զանիկա մի՛ ծախիր» (Առակ. ԻԳ. 23):



Չաքարիայի ճարդարէական օրհնութեան հաստատութիւն կու տայ աւետարանիչ Յովհաննէս, ճշգրտով կարապետին կողմէն ու պաշտօնը: Չաքարիայի որդւոյն ծնունդը ա՛յնչափ հրաշայի եղաւ, որ շատերուն միտքին մէջ կարծիք ծագեցաւ, մի՛ պուցէ խոտոտցեալ Մեհիան նա ըլլայ: Աւետարանիչը կ'աղէ այդ միտքը հեռացնել, և հաստատել՝ թէ պէտք է զատել վիպեալը վեհայութիւն սուտէն: Չաքարիայի Յովհաննէսը Լոյս Մեհիան չէ, այլ անոր առջեւէն եկող Կարապետը, անոր համար վիպութիւն սուտը, աշխարհք եկաւ, այն աշխարհը՝ զոր ինք ստեղծեց, բայց աշխարհք զայն չճանչցաւ: Մեհիան իր ընտրեալ ժողովուրդին՝ Իսրայէլին մէջ եկաւ, բայց այս ժողովուրդը զայն չընդունեցաւ: Իսկ սրանք որ ընդունեցան, անոնք Աստուծոյ որդի լինելու պատւոյն բարձրացան. որդիութիւն մը, որ բնական որդիութեան կերպով չէ: Բնական որդիութիւնը արեան կապակցութեամբ, մարմնայ խառնմամբ և մարդկային կամքով կը կատարուի. իսկ այս դերբնական որդիութիւնը միայն Աստուծոյ կամքով կատարուեցաւ: Որովհետեւ Բանն, որուն վերայ արդէն խոսած էր աւետարանիչը, մարմին առաւ, մարդ եղաւ, մարդոց հետ բնակեցաւ. ինքն Բանն և Որդին Աստուած եղաւ Որդի Մարդոյ, որով և որդիք մարդոյ բարձրացան իննէլ որդիք Աստուծոյ: Բայց ոչ թէ սասկ Բանին աստուածութեան փառքը նուազեցաւ, որովհետեւ մենք ամէնքնիս, կ'ընէ աւետարանիչը, տեսանք անոր փառքը, իրաւջնէլ աստուածային փառք Որդւոյն Աստուծոյ, ըստ ինքեան ճշմարիտ, և մեզ համար շնորհաբեր:

Յովհաննէս Մկրտիչ Հրէից մէջ ծանօթ գերդաստանի մը գաւակն էր: Լայրը Չաքարիա՝ Արիայի գոտակարգէն քահանայ էր, իսկ մայրը Եղիսաբէթ սերած էր Անարօնեան քահանայական ցեղէն:

Եղիսաբէթ ամուսն էր: Չաքարիա հրք օր մը Տաճարի մէջ կը պաշտօնավարէր տեսիլք մը ստանալու, և ապա Աստուած իրեն գաւակ մը պարգևեց և անունը Յովհաննէս կոչուեցաւ:

Յովհաննէսի ծնունդը տեղի ունեցաւ Արսուսի ծնունդէն վեց ամիս առաջ:

Յովհաննէս, իբր ճգնաւոր, Յուդայի անտապատին մէջ կ'անցընէր իր ժամանակին մեծ մասը և հին կը գրասէր կրօնական խաղաւով և Խնքնուր վերնացումներով:

Ազգոյ մագերէ շինուած հազուստ մը կը հագնէր և անտապատին մէջ վայրի մեղր ու մարխի կ'ուտէր: Ըին տանն մարտիը կը խորովէին ու կ'ուտէին իբր կերակուր: Մովսէսի օրէնքը Հրէից կ'արածէր մարտի ուտել (Ղու. փԱ. 22):

Այս աստիճանը Հրէից մէջ կոչնդեան (Essens) կոչուած կրօնական խմբակ մը կար: սրան անդամները հեռու կը մնային ընկերական հաւաքոյթներէ, կը խորշէին համարած կերակուրներէ և գեղեցիկ հագուստներ հագուելէ, չէին քաջաչրերի նսեւ ամուսնութիւնը, և այսպէս մարդոց ներկայութենէն հեռու՝ անտապատին մէջ կրօնական խորհրդածախիւններով կը պարսպէին ճգնաւորի նման: Յովհաննէս անոնցմէ շատ ազգուած էր և անոնց սպրիտակիրպին կը հետեւէր:

Նախապատճառական գործը Իբսուսնէսի համար:

Յովհաննէս իբր ճգնաւոր թէեւ անտապատին մէջ կ'անցընէր իր ժամանակը, բայց մերթ ընդ մերթ քաղաք կու դար և ժողովուրդին ապաշխարութիւն կը քարոզէր, միանգամայն Յորդանան գետին եզերքը ժողովուրդը կը մկրտէր(7) վասն ապաշխարութեան:

Յիսուս տակաւին իր հանրային պաշտօնին չձեռնարկած Յովհաննէս Մկրտիչ արդէն կրօնական շարժում մը սկսած էր Յուդայի մէջ, իբր նախապատրաստութիւն Յիսուսի կողմէ հաստատուելիք քրիստոնէական կրօնին համար:

Յիսուս ապագական էր Յովհաննէսին և մեծ հետաքրքրութեամբ կը հետեւէր անոր կրօնական շարժումին: կը յարգէր անոր անձը և կը գնահատէր անոր սպրած մաքուր ու աստուածաճանաչ կենցաղը: Ասոր իբր ապացոյց ինք ևս եկաւ և ուրիշներու կարգին մկրտուեցաւ անկէ:

Մահը:

Յովհաննէսի մահը կանխատեսու էր: Հորովդէս Անդիպատի հրամանով Երիտասարդ հուսակին գլխատուեցաւ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

(1.1-17)

1 Աշխարհի ստեղծարժութենէն առաջ գոյու-  
թիւն ունէր Բանը, այսինքն Որդին: Բանը Աստուծոյ  
2 Հետ էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աս-  
3 տուծոյ Հետ էր: Անով էր որ Աստուած մտէն ինչ ստեղ-  
4 ծեց. առանց Անոր ոչ մէկ բան ստեղծեց: Կեանքը Անով  
5 սկիզբ առաւ. եւ կեանքը մարդոց համար լոյսն է՝ որ  
խաւարին մէջ կը փայլի. եւ խաւարը չկրցաւ Անոր յաղ-  
թել:

6 Յովհաննէս, որ Աստուծոյ կողմէ զրկուած մարդ  
7 մըն էր, եկաւ Լոյսին համար վկայութիւն տուաւ, որ-  
8 պէտքի մտէն մարդ Անոր սնունդին հաւատայ: Ինք Լոյ-  
9 սը չէր, այլ՝ Լոյսին համար վկայ մը: Բանն էր ճշը-  
մարտիւ Լոյսը, որ աշխարհ գալով կը յուսաւորէ մտ-  
10 թող մարդկութիւնը: Աշխարհի մէջ էր Անիկա, աշ-  
խարհը Իրմով ստեղծուեցաւ, ստեղծն աշխարհը զԱյն  
11 չճանչցաւ: Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց  
մարդիկ զինք չընկունեցին: Իսկ զինք ընդունողներուն  
12 եւ Իրեն հաւատացողներուն՝ իշխանութիւն տուաւ Աս-  
13 տուծոյ որդիներ ըլլալու: ո՛րք որեւէ ճամբով եւ ո՛չ  
մարմնի կամ մարդկային կամքով, այլ Աստուծմէ  
ճնելով:

14 Եւ Բանը մարմին հղաւ. եւ մեր միջեւ բնակեցաւ՝  
չնորճքով եւ ճշմարտութեամբ լեցուն: Մենք տեսանք  
Անոր փառքը, փառքը Աստուծոյ միածին Որդիին:

15 Յովհաննէս Անոր մասին վկայեց, յայտարարե-  
լով. «Անիկա է Ան, որուն մասին կ'ըսէի. "Ան որ ինձ-  
մէ ետք պիտի գայ՝ ինձմէ մեծ է, որովհետեւ ինձմէ  
16 առաջ գոյութիւն ունէր": Իր յիստատ չնորճէն մենք  
17 շարունակ չարճք ստացանք, որովհետեւ Օրէնքը Մով-  
սէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ չնորճն ու ճշմար-  
տութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:



1 In the beginning was the Word,  
and the Word was with God, and  
the Word was God.\* He was in the be-  
ginning with God; all things were  
made through him, and without him  
was not anything made that was made.  
'In him was life,' and the life was the  
light of men. The light shines in the  
darkness,<sup>a</sup> and the darkness has not  
overcome it.

6 There was a man sent from God,  
whose name was John. He came for  
testimony, to bear witness to the light,  
that all might believe through him.  
He was not the light, but came to  
bear witness to the light.

He was in the world, and the world  
was made through him, yet the world  
knew him not. He came to his own  
home, and his own people received him  
not. But to all who received him, who  
believed in his name, he gave power to  
become children of God; who were  
born, not of blood nor of the will of the  
flesh nor of the will of man, but of God.

14 And the Word became flesh and  
dwelt among us, full of grace and  
truth; we have beheld his glory, glory  
as of the only Son from the Father.  
(John bore witness to him, and cried,  
"This was he of whom I said, 'He who  
comes after me ranks before me, for  
he was before me.'") And from his  
fulness have we all received, grace  
upon grace. For the law was given  
through Moses; grace and truth came  
through Jesus Christ. No one has  
ever seen God; the only Son,<sup>a</sup> who is in  
the bosom of the Father, he has made  
him known.

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ կը կոչուի Զատիկին անմիջապէս յա-  
ջորդոց Կիրակին, որովհետեւ Միաշարժի որը Քրիս-  
տոսի յարութեամբ նուիրացարժուեցաւ եւ Կիրակի =  
տէրունի օր եղաւ, եւ հետեւաբար տաղին անդամ տ-  
նոր յաջորդոց Միաշարժը կ'ըլլայ Ուր Կիրակի մը:  
Նոր Կիրակին Զատիկն ութերորդը ու Զատիկ նման օր  
մը ըլլալով՝ Կրկնագատիկ այ կոչուեցաւ: Անոր յիշ-  
ատկը Քրիստոսի Յարութեան տօնէն զատ հեթոմասոց  
կաշման եւ Քրիստոսի Էկեղեցւոյն ընդարձակման եւ  
տարածման ալ յիշատակը կը սրբունակի, եւ այս սե-  
տակէտով Էկեղեցւոյ տօներուն շարքին ալ կ'անջնի: